

ՄԵՆԿ

Տարեկան զինը 10 բուր, կես տարվանը 6 բուր:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրելի գիտում են ուղղակի
Туфласъ. Редакция «Мусака»

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՆՈՒԹԻՒՆ

Հարկաւոր է թէ հարկաւոր չէ:—Ներքին ՏԵՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ: Նամակ թիւրքալոյց: Արտաքին լուրեր:—ՀԵՌԱՊՈՐՏՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱԳՐԱՐՈՒԹԻՒՆ: Համապարփակ զեպի և լուսանկարներ: Նախադր:

ՀԱՐԿԱՒՈՐ Է ԹԷ ՀԱՐԿԱՒՈՐ ՉԷ

Խոսելով պրոֆէսոր Անդրէաս Արծրունու լուսանկարութեան մասին, մենք այն միտքն ենք յայտնել, որ դա յատուկ է կիսակերթ պատկերին հետաքրքրել աւելի հեռաւոր երկրներով, քան թէ իրանց սեփական, հայրենի երկրով: Իրանց չորս կողմ եղած երկրներով: Ինչ որ մեզ շրջապատում է, ինչ որ մեր չորս կողմն է, մեզ միշտ անհայտ է, չնչին է երևում, ուշադրութեան արժանի չէ երևում:

Մեր յիշողութեան մէջ միշտ կը մնայ հետեւեալ անցքը: Մի օր մտնում է մեր խմբագրատունը մի մարդ և բերում է մեզ մի երկար, փիլիսոփայական անհամ յօդուած հայոց ազգի, հայոց լեզուի, յայտնի է, որ նա հարցնում է, որ նա ո՞ր տեղացի է, — «ես շուշապուրցի եմ» եղաւ պատասխանը, ուրեմն աւելի լաւ է նկարագրել, քան թէ Շուշապուրցի գիւղը, քան թէ փիլիսոփայական յօդուածներ գրելու:— «Շուշապուրցի վրա ես ի՞նչ գրեմ, պատասխանեց փիլիսոփայ, Շուշապուրցի մի հասարակ գիւղ է»:

Ահա այս պատասխանը յատկանշիչ է հայերից շատերին, նոյն իսկ մեր ինտելի-

գէնցի աւագը համալսարանական դասակարգը այդ պարունակ է նմանում: Ինչ որ հասարակ է, այսինքն ինչ որ մեր կեանքին է վերաբերում, մեր համալսարանականների կարծիքով նկարագրութեան արժանի չէ: Այդ է պատճառը որ երբ մի մարդ գալիս է և դասախօսութիւն է անում մեր երկրի մասին, մեր երկրի հանձնարարները, մեր գիւղացիների դրութեան մասին, նրանց բարք ու վարքի մասին և այլն, — այդ բոլորը համալսարանական մարդը աւելորդ է համարում իսկ, որովհետեւ դրանք շատ հասարակ բաներ են:

Այժմեան սերունդը, ուրեմն նոյն սխալներ է անում, ինչ որ անում էին մեր նախահայրերը գեռ հինգերորդ դարում: Մովսէս Խորենացին, ինչպէս և յիշեց իր դասախօսութեան մէջ մեր երկրաւարը պրոֆէսորը, խոսելով իր երեւելի գրութեան մէջ Գողթանի գաւառի ժողովրդական երգերի մասին, նրանց մի քանիների փոքրիկ կտորները միայն յիշում է, աւելացնելով թէ ամբողջ երգերը չեն յիշել, որովհետեւ նրանք ժողովրդի բերանումն են: Բայց այդպիսով չարձանագրելով Գողթանի երգերը, որովհետեւ նրանք ամենքին յայտնի են, — նրանք այժմ կատարելապէս կորան:

Այդպիսով Մովսէս Խորենացուց շատ հեռու չէ գնացել մեր այժմեան սերունդը: «Գողթանի երգերը շատ հասարակ բաներ են և ամենքին յայտնի են, ասում էր Մովսէս Խորենացին, ուրեմն չարձէ նրանց արձանագրել»:

Նոյնն ասում է և այժմեան հայը. «Շուշա-

պուրը շատ հասարակ գիւղ է, ուրեմն չարձէ նրան նկարագրել»:

Նոյնն ասում է վերջապէս և մեր համալսարանական հայը. «Այս ինչ մարդու դասախօսութիւնը շատ հասարակ բան է, քանի որ մեր երկրի վրա է, ուրեմն չարձէ նրան իսկ և չարձէ առհասարակ գրառել հասարակ, մեզ շրջապատող, կենսական բաների դիտողութեամբ»:

Այդպիսով մեր այժմեան սերունդը, մեր համալսարանական դասակարգն անգամ, մնաց մտաւոր զարգացման նոյն կէտի վրա, որի վրա գտնվում էին մեր նախահայրերը հինգերորդ դարում:—Ինչ որ մերն է, ինչ որ հասարակ է, ինչ որ ամենօրեայ է չարձէ ուսումնասիրել:

Այդ տեսակ ինտելիգենցիայով մենք շատ հեռու չենք գնաց:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ-ԲԱՅԱՋԵՏԻՑԻՑ մեզ գրում են հետեւեալ: «Սեպտեմբերի 4-ին գիշերը պատահեց այստեղ մի գողութիւն. տեղիս բնակիչ Գեորգ Գաբաշեանցի դռնապանը կողոպտելով գողացել են բաւական թւով ոչխարի կաշիներ: Առաջակները գեռ անցանք են: Փնտրութիւնը սկսվել է»:

Նոյն տեղից մեզ գրում են և հետեւեալ: «Նոյն անգամ շատ վատ է այստեղ. ամէն օր շարունակ բաւական անձրեւ է թափվում և խեղճ հողագործների ցորեն և գարի կաշիներ այս պատճառով յետաձգվում է օրից օր»:

յառաջացած կեղտի և ճարպի նշաններն են ցոյց տալիս:

Եւ ակամայ յիշում եմ այդ դէպքում, որ մի քանի տարի սորանից առաջ մի այլ, հեռաւոր երկրում, Ուրալեան լեռներում գտնվելով, ես զարմանում էի այնտեղի գիւղացիների մաքրասիրութեան վերա. այնտեղ ամէն մի գիւղացու տան այդու կամ բանջարանոցի մօտ գտնվում է մի անասնաձիւն յիւստիւն, որ բաղնիքն է: Իսկ գլխաւորների վերաբերութեամբ աչքի է ընկնում մի ճանապարհորդած երկրում բնակվող գոլթօրսերների կիսանց մաքրութիւնը, համեմատելով հայ գիւղացի կանանց շորերի առաւել փոքր խտակութեան հետ:

Այնու ամենայնիւ հայ կանանց շորերը շատ գեղարուեստական են և առանձին ուրախ և զուարթ տեսարան է հանդիսանում մի ճանապարհորդի աչքին, երբ նա արեւի մայր մտնելու ժամանակ մօտենում է մի գիւղին: Մի լեռան գագաթի վրայի վերա ջրը ու ցան երևում են բազմաթիւ աններ, որոնց տափակ կտուրների վերա գործունեայ կեանքն է եւ գալիս. ամբողջ գիւղի կանայք և երեխաներ իրանց կարմիր կամ վառ դեղին շորերով թափվում են փողոցների կամ կտուրների վերա, ցրվում են ամբողջ գիւղի մէջ, կուծկրը ուտելին ջրի են դնում, կամ կտուրների վերայից հաւաքում են շորացնելու համար սփռված հոնի հատիկները: Ամբողջ գիւղը առանձին լուսով է լուսաւորվում, բազմաթիւ կարմիր և դեղին առարկաներ ասես թէ աշխատում են երկարացնել մայր մտնող արեւի լուսի աղբյուրութիւնը, կամ իրանց փայլուն շոր տեղը բռնել: Եւ ակամայ ձիւ կանգնեցրել այդ գուարթ տեսարանը առաւել հանդիս կերպով վայելելու համար, այդ ներդաշնակութիւնը, որին լրացնում էին և ուրախ բազմաթիւ ձայներ: Ո՛վ կարող էր կասկածել, որ այդպի-

Այս օրերս հասա Թիֆլիս պ. կամարական, վանի ուսաց հիւպատոսը:

Այսօր ուղևորվում է դէպի Գերմանիա պրոֆէսոր Անդրէաս Արծրունի, որովհետեւ շուտով սկսվում են, ինչպէս և ամէն գերմանական համալսարաններում, Բրեսլաւ քաղաքի համալսարանի մէջ դասախօսութիւնները:

Վարչակայի «Prawda» լրագիրը հաղորդում է, որ բարձրագոյն ուսումնարանական վարչութիւնների կարգադրութեամբ, նոր ընդունված աշակերտները առաջին երկու ամիսների ընթացքում պարտաւոր են քննութեան ենթարկվել, որ պէտք է ցոյց տայ, թէ նրանք արդեօք ռուսականացի պատրաստված են այս կամ այն դաստան համար: Հակառակ դէպքում, մանկավարժական ժողովը կարող է տեղափոխել աշակերտին հետեւեալ ստորին դաստանը, իսկ եթէ դաստան մէջ տեղ չի լինի, մանկավարժական ժողովը կարող է բոլորովին արձակել նրան ուսումնարանից:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ այս տարի Ս. Պետերբուրգի բոլոր քաղաքային ուսումնարաններում մտնել ցանկացողների թիւը խիստ շատ էր, այն ինչ զինուորական ուսումնարանները այդ կողմից դրանց հակապատկերն են ներկայացնում: Ալեքսանդրեան 3-դ կադէտսկի կորպուսում, ուր երթեկեկ աշակերտներ են ընդունվում, բոլոր դասակարգերից նոր մտնողներ այնպէս քիչ էին, որ այդ կորպուսի մէջ գոյութիւն ունեցող գոլթօրսեանց դասատուները, հարկաւոր չը լինելու պատճառով, փակված են: Նիկոլաեւսկի հեծելազօրնների կադէտսկի կորպուսի պատրաստական դասատուներ այս տարի ոչ մի աշակերտ չը մտաւ:

«Prawda» լրագիրը հաղորդում է, որ Ս. Պետերբուրգի բոլոր ուսումնարաններում 290 աղատ տեղեր կային, իսկ քննութիւն բանողներ 1,834 հոգի էին:

սի մի գիւղ իրան բաղաւոր է դրում, բարձրութիւն է վայելում: Իսկ դա հետեւեալ չէ արդեօք խղճմտաւոր և անընդհատ աշխատանքի:

Մեր անցկացած գիւղերի բնակիչները շատ առողջ են երևում. իսկ կանայք մեծ մասով գեղեցիկ են, և այդ զարմանալի չէ, եթէ ճիշդ է մեզ հաղորդված երեւոյթը, որ գիւղացիները, բնածին ներքին զգացմունքից դրված, միայն գեղեցիկ և առողջ աղջկանց հետ են ամուսնանում, որ նրանց չէ դրաւում հարստութիւնը, երբ դա միաւորված է տեղեւորութեան հետ:

Այդ կողմերի կանանց զգեստին գուցէ յատկանշիչ կարելի է համարել, որ նրանք ոչինչ զարդ չեն գործածում մարմնի վերա—ոչ ականջի օղեր, ոչ ապարանջաններ (բազուկներ), զարդարված է լինում միայն վերի շորը, որի ձեղքված մէկ միւսին կոծկված թեւերի երկու եզրերին կարած են լինում դրամներ. նոյնպէս և զլխի և պարանոցի վերա շարված են դրամներ, որք, զգեստ կրողի կարողութեանը նայելով, կամ 20-կոպեկանոցներից, կամ ոսկիներից, կամ վերջապէս հին դրամներից է բաղկանում:

Բոլոր մեծ գիւղերը իրանց միջոցներով ուսումնարաններ են հիմնել: Բանանց, Փիլի, Չարդախլու գիւղեր ուսումնարաններ և մի մի վարժապետ ունեն և եւ առիթ ունեցայ տեսնել, թէ Փիլի վարժապետը, որի մօտ 100-ի չափ երեխաներ են սովորում, գիւղացիների կողմից պատիւ է վայելում: Գիւղացիները անզաղար նրան են դիմում ամէն տեսակ հարցերով և նրա և նրանց մէջ եղած յարաբերութիւնները բարեկամութեան և յարգանքի դրոշմ են կրում: Եւ չը գիտեմ որքան ճիշտ էր իմ դիտածը, բայց ինչ երևում էր, որ վարժապետը քահանայից առաւել մեծ յարգանք է վայելում: Եւ բնակիչների թիւ մասին ոչինչ հաստատ բան ասել չեմ կարող. գիւղի տանուտէր-

ԲԱՆԱԳՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՆԱԳՐԱՐՈՒԹԻՒՆ ԳԵՊԻ ԵՒ ԻՍԱԿԵՏՊՈՒՆԱՋԱՆԳԻ

(Շարունակութիւն)

Հայոց գիւղ մտնող ճանապարհորդը տարբեր սպասարկութիւն է ստանում, նայելով թէ օրվայ որ ժամերին լինում է այդ. բայց մի բանի մէջ այդ սպասարկութիւնները միմեանց նման են՝ ոչ չէ կարող հերքել, որ հայ գիւղացին աշխատասէր և գործունեալ է. անգործ մարդիկ հազիւ կարելի է տեսնել, եթէ առանձին կերպով անհաստ չէ եղանակը:

Առաւօտները մենք գիւղերը մտնելով, միայն կանանց, ծերերին, երեխաներին և հիւանդ աղա-մարդկերանց էինք հանդիպում, որովհետեւ հասակաւոր և առողջ աղաւթաւորի կամ այգիներումն էին զբաղված, էամ աշխան ցանքի համար էին բարձրացել լեռների գագաթներին վերա: Մի մի անգամ կանայքն էլ վարուցանքի աշխատանքի մէջ օգնում էին իրանց մարդկերանց, որոնք ցանքից տափան էին անցկացնում արտերով, բայց մեծ մասը նրանք առաւօտները իրանց տան մէջ անային գործերով են զբաղված: Մի տեղ տեսնում եւ իրար հարեան մի քանի տուն միասին հայ են հունցում, որովհետեւ այդ տները միմեանց պատկանող թանկերը վաճառում է. մի այլ տեղ կանայք բոլոր կամ թեւ են մանում, գուլբաներ են գործում, կապերներ կամ «կարպաներ» են պատրաստում. ոչ մի տեղ անգործ կանայք չէք տեսնել, նրանք ժամանակ չեն չափում: Ինչպէս երևում է կերակրվելու ձեր գիւղից գիւղ, տունից տուն տարբեր է լինում, նայելով որքան ունեւոր են դա բնակիչները: Բանանց և Փիլի գիւղերը հա-

«Русский Курьеръ» լրագրի մէջ կարգում ենք հետեւեալը: Յայտնի է, որ մինչև այժմ Արմա-նայի ուսումնարանի շրջանը կառավարվում էր ժողովրդական լուսաւորութեան միջնորդութիւնից անկախ: Ներկայումս վերադարձած ուսումնարանական շրջանը ստորադրված է, 1883 թ. յուլիս ամսից, ժողովրդական լուսաւորութեան միջնորդին կայսրութեան բոլոր շրջանների բնութեամբ հիմունքների համաձայն:

Մայրաքաղաքի լրագրիներին Ս. Պետերբուրգից հաղորդում են, որ այնտեղի գրադարանները լրջ-ված են լինում: Ի. Ս. Տուրգենևի հեղինակութեանը պահանջող անձինքներով: Նոյնպէս շատ են պահանջում Բէլինսկու, Պետրեւի, Գոր-բուխովի, Չէրնիշևի և Բէլինսկու հեղինակութիւնները:

«Русск. Вѣд.» լրագրից հաղորդում է, որ Մոսկվայի ուսանողների մէջ ստորագրութիւն է սկսվել մի պատիկ համար, որ պէտք է դրվի Ի. Ս. Տուրգենևի դագաղի վրա:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՍՅԱՆ

Կ. Պոլիս, 5 սեպտեմբերի

Պատրիարք սրբազանը եկած է պատրիարքարան և կը վարէ գործերը, բայց լրագրիները կը հաղորդեն, որ սրբազանը չը ստորագրէր «Պատրիարք» այլ պարզապէս Ներսէս եպիսկոպոս: Ասկէ կերևի որ պատրիարքը իր հրաժարանից դր և թէ ևս առաձի պէս է և ոչ թէ բոլորովին ետ առած: Արդարեւ պատրիարքը ի յարգանս Սուլթանին առաջած իր պաշտօնին գլուխը անցաւ, բայց վերջնական կերպով պատրիարք մնալու համար հարկ է որ կառավարութիւնը սկսի գործադրել այն առաջարկութիւնները, որոնք Ներսէս սրբազանը Պատրիարքը Սուլթանին ևս յայտարարած է թէ՛ ինքն կարող չը պիտի ըլլայ կառավարել իր աղ-ղէ քանի որ ոչ ոք չի կարող իրաւունքով խոստովանել իր չը գործադրողը, այլ հետզհետէ խոստովանելը կը շատնան ընդդէմ հայոց: Թէ աղբիւր և թէ երկր-րին ճշմարիտ բարեկամ Ներսէս սրբազանը աղա-չած է Սուլթանին որ իրաց այս վիճակին դար-ման տանի: Կը լսուի թէ Սուլթանը խոստացել է պէտք եղածը ընել և թէ այժմ կ'ուսումնասիրէ այս գործը: Աստուած տար չիտակ ըլլար այս լուրը: Հիմա ամեն բան Սուլթանին ձեռքն է: Զարմանալի սուր յիշողութեան տէր, բնութիւն-

ները կարողանում են միայն այն թելը հաղորդել որք աղբիւրք են 15 տարի առաջ կամ էլ աւելի վաղ եղած ժողովրդագրութեան (կամերա): Գորա հիման վերա օրինակ Փիլի դեղը 250 տուն ունի, այնինչ այժմ տուտ են, որ դրանց թիւը 400-ի չափ կը լինի: Բայց այդ թիւն էլ դժուար թէ հարաւոր է ճիշդ կամ իրականութեան մօտ համարել, դա էլ աւելի պակաս է երեւում քան թէ այն, ինչ որ աչքն է տեսնում:

Պիւրկան անունների մասին խոսելով, ևս յիշել էի, որ այդ անունները հին պատմական ժամա-նակներից մնացորդներ են: Անկասկած չառ դիւ-ղեր ժամանակների ընթացքում կորել-գնացել են, շատեր միայն անշնան նշողներ են թողել, շատ ուրիշներից մինչև անգամ աւերակներ չեն մնա-ցել: Իսկ միւս կողմից այժմ էլ ցիր ու ցան գտնվում են մատուռների, եկեղեցիների, և վանքերի աւերակներ, անտառների մէջ, առան-ձնապէս և մոտացված, չլրջապատված գերեզ-մանաբարերով և խաչաքարերով, որոնց վերա երբեմն պահպանվել են արձանագրութիւններ: Դաւթոր գետի, այդ անտառապատ արաղընթաց ջրի հոսանքի ձորի տարածութեանը է գլխաւոր-րապէս, որ մէկ մէկի մօտ շարվում են հին պատ-մական յիշատակները: Դաւթորի ձորը մի խոր ճեղքի պէս բաժանում է երկու շղթաների շար-քերը և նրա ընթացքով ահա մէկ մէկից յետոյ, աչքին ընկնում են գանազան աւերակներ: Ահա «Եօթ եկեղեցի» ասված տեղը, որ իսկապէս Դաւթ-բորի աշակերտացի գետակից Ալուէտաշէնի ջրի ձախ եզրի վերա է գտնվում: Գրանք բարձր և գրեթէ անմատչելի ուղղահայեաց ժայռի մէջ փոր-ված խուցերն են, որոնց մէջ, ինչպէս հաւատա-ցնում են, հին ժամանակներում պատուարան էին որոնում պատերազմից հալածվածները: Պատմում են նաև, որ այդ եօթ եկեղեցիներից մի քանիս-

նէն պետական անձ ծնած արդի Սուլթանը ինքն անձամբ կը անօրինէ երկրին ամեն գործերը: Նա-խարարը ուրիշ բանի չեն ծառայել բայց պարզա-պէս ստորագրութիւն գնելու, սուլթանը չունի վստահութիւն ոչ մի նախարարի մտաւոր բարձր կարողութեան վրայ: Մօտէն սուլթանը ճանչցող-ները կրտսն թէ՛ բնութիւնը դեռ մեծ ձիւղերով օժտած է, և միանգամայն լաւ ուրիշ ունի ու կը փախաղի իր հպատակներուն բարբորութիւնը ու երջանկութիւնը: Երանի թէ կայսրութեան ներ-քին գործերու վերաբերեալ քաղաքական սխալ տ-ւանդութիւնները չը մոլորեցնէին սուլթանի դադա-փախելը և ըմբռնել թէ հայոց աղբիւր սիրտը գրաւելով և Տաճկա-Հայաստանը բարեկարգելով օս-մանեան կայսրութեան վերակենդանութեանը նոր գարկ մը տուած կը լլայ:—

Իսկ Ներսէս սրբազանի գալով, չենք կրնար չը զգալ մեծ գոհունակութիւն մը տեսնելով որ առանց վնասելու անդադր կը պահանջէ հայոց վիճակի բարեւոյթը: Ինչպէս երբեմն երկեղը, այժմ ևս գգունաքններն ու և աղբիւրներն չը-րին սրբազանին վրա, և չը վարանքին համարձա-կօրէն բոլի կայսրը ինչ որ կը դատէ կենսական պիտոյք թէ հայ աղբիւր և թէ Տաճկաստանի հա-մար:

Այս օրերս լուր մը տարածուեցաւ թէ կայսրա-կան հրամանաւ պէտք է դադրէին Աղբ. ժողովը նիստերը, մասնաժողով մը պիտի կազմուէ աղբիւր մէջ երեւելի բուսած մարդերէն և այս ժողովը պիտի կառավարէ պատրիարքի հետ միասին հայ աղբիւր: Այս լուրը անհիմն կերելի, և հասանքին տարիներէ մը անտաւոր գոհմանքով որուն վը-րա արդէն գրած ենք: Ինչպէս ըսած էինք մի քա-նի երեւելիներ ժողովը ընելով կը փախաղէին առ-ժամանակեայ կերպով դադրեցնել սահմանադրու-թիւնը, բայց Ներսէս սրբազանը դիմադրեց: Եւ ար-դարեւ այսպիսի միջոցի մը դիմելը շատ վատ հետեւութիւններ կունենայ, և ներքին աւելի մեծ երկպառակութիւններու պատճառ կը լլայ: Բայց առաջին Աղբ. ժողովը քիչ մը ասին թերեւ չը գումարի մինչև որ հանդարտութիւն տրէ և պատ-րիարքն ալ պատասխան ընդունի իր ըրած առա-ջարկներուն: Իսկ ժողովի մէջ պատրիարքի հակա-ռակորդը եղողները պիտի կրնան իրենց հակառա-կութիւնը շարունակել: Քանի որ Ներսէս սրբա-զան այսպիսի կարեւոր գործի ետեւ ինկած է սուլ-թանին մօտ, Պատրիարքը սրբազանի հակառակելն այս միջոցին ուրիշ բան չէ բայց եթէ աղբիւրն ո-ճիր մը գործէ:—

Եթէ մեզի համար ցաւալի յարաբերութիւննե-ր կան Աղբ. ժողովի և Պատրիարքի միջև, գլխաւոր պատճառն է որ պատրիարքը ունի աղբիւր մէջ շատ

ներք մինչև այժմ էլ դանազան իրեր են պարու-նակում: Օրինակի համար ասում են, որ մի ան-գամ մի աղաւաւ այդ եկեղեցիներից մինի միջից մի ձեռագիր դուրս բերեց և վայր ձգեց: Բայց ևս միայն մի պարսկերէ տեսայ, որ ինքն անձամբ մաղցել էր այդ անմատչելի քարափի վերա, բայց նրան էլ եօթ եկեղեցիներից միայն մէկը, առա-ջինը յաջողվել էր տեսնել: Գա մի փոքր խուց էր, ժայռի մէջ փորած, բայց արեւմտապէս ըա-րկրով պատած: Նրա մէջ ոչինչ հին յիշատակ ո-չինչ հնութիւն պարունը չը գտաւ: Մնացած վեց եկեղեցիները ընաւ մատչելի չէին և յաջորդ ճա-նադարձողներին թողված է վճել կայ արդեօք դրանց մէջ մեր նախնիների պատմութեան վերա նոր լույս ձգող մնացորդներ:

Բարձրադասով Դաւթորի հոսանքով մենք հա-նում ենք Գետաբակից իջնող գետակին, բայց արդէն դրանից առաջ մեր հայեալքը դրաւում է մի մեծ, ընդարձակ աւերակ, որ երկու գետերից կազմ-ված թերակղզու ժայռոտ բարձրութիւնն է բռնում: Գա հոյակապ Նամուրդաբերդն է, որ, չը նայելով դարերի անթիւ մրրիկներին, մնացել է իր պարիսպ-ներով, աղիւսալէն և քարաշէն պատերով և աշտարակներով: Բերդի տիրապետող դիրքը և նրա ճարտարապետութիւնը՝ անկասկած կարող են նայողին դիմաւորել, բայց երբի մի ժամանակ կարող էին և սարսափ դնել յարձակողների վի-րա: Ինչպէս երեւում է, շատ բերդերի համար ընտ-րում էին հին ժամանակներում երկու միաւորվող ջրերի մէջ գտնվող թերակղզիները, մասնաւոր ձախ նրանց ժայռոտ բարձր դիրքը նպաստաւոր էր պաշտպանութեան: Նամուրդաբերդը հետա-գոտված չէ—նա էլ դուցէ արձանագրութիւններ է պարունակում, որոնք կ'օգնեն իր ժամանակի պատմութիւնը վերակենդանել: Պ. Բ. Գ. Ֆ. Ի. կար-ձկնով դա գուցէ Գարամանացի բերդն է, որի մա-

բարձր դիրք մը, իսկ ժողովի անդամներէն շատերը հեռուէն իրենք այդ դիրքին մօտենալ է. համեմա-տութեան պակասութիւն: Պատրիարք մը, որ հայ աղբիւր մէջ կը վայելէ ժողովրդականութիւն մը, որուն նմանը քիչ տեսնուած է, պատրիարք մը, որ եւրօպական համար մը ունի, պատրիարք մը որուն հետ մեծ յարգանք կը վարուի երկրին վի-ճադետը, և ասոնց վրա աւելցուր այն խորին և ճշմարիտ համոզումը, որ ունի պատրիարքը թէ՛ կաշխատի մեծ գործի մը համար այն է օգուտ քա-ղել իր աղբի տառապանքներէ գանկիկալ փրկու-թեան ճամբուն մէջ մոցնելու համար, և ահա այս պատրիարքը ունի ժողով մը ուր տաք գլուխներ կը տիրապետեն, որուն անգամներէն շատերը մոռ-ու անշնան մարդիկ են, ժուար է այսպիսի պատ-րիարքի մը կուրօրէն հնազանդել այսպիսի ժողո-վի մը: Եթէ ժողովը ըլլար կազմուած առաջն-դասուր, աղբիւր մէջ նշանաւոր դիրք ունեցող ան-ձերէ, իսկ պատրիարքը ըլլար մոռվ անձ մը դար-ձնալ այս անպատահութիւնը պիտի ծագէր, միայն թէ այն առնալ պատրիարքը կրնար դիւրաւ գլուխ ծռել ժողովին, իսկ այժմ ժողովը կը զփկամակի գլուխ ծռել: Փափագելի էր որ առաջին այնպէս գործ տեսնէին, որ իրարու գործի չը խառնուէին: Պատրիարքը իրեն մտածութիւններուն գլխաւոր առաւելայն ընէր Տաճկա-Հայաստանի բարեկարգու-թիւնները, իսկ ժողովը զաւելը գլխաւորաբար կը թախան, և ուրիշ գուտ մեր ներքին գործերու վերաբերեալ հարցերով, և այս այսպէս շարունա-կէր ասին մը մինչև որ մեր վիճակը որոշ կեր-պարանք մը տեսնէ: Ինչ և է տալով ասանկ առ-կախ կեցած ենք, սպասելով թէ ինչ պիտի ըլլայ: Արդէն մենք ալ սպասելէ գաւտ ուրիշ բան բրած չունինք:

Անցած օր «Մարտի»-ի մէջ սա տողերը կարգա-ցինք. «Կը լսուի թէ Ներսէս սրբազան երեք չա-րաթ առաջ գիր մը ստորագրելով յանձնած է վանայ կուսակալ Հասան փաշային, յայտարա-րող թէ՛ վանայ 12 երեւելոց հանրաժանութիւն հե-ռագիրն, որով երկրին վիճակին կատարեալ դո-հութիւն կը յայտնէին, ճիշդ և անկեղծ է, և ինք համաձայն է գայն ստորագրողաց, իսկ այդ հեռա-գրոյ դէմ բողոք բարձրացնելը խաթմուած ամբո-խի դատին և եթ կը վերաբերին, որոշ խօսքերը նշանակութիւն չունին և այլն և այլն:—«Մա-րտի»-ի այս լուրը մեծ յուզում պատճառեց հոս մանաւանդ Հայաստանցիներուն մէջ: Կառավա-րութիւնը փոխանակ իմաստութեանը մտածելու թէ ինչ կըրպով կրնայ բարեկարգութիւններ ներ-մուծելու, կեղծ այդպիսի ստորագրութիւննե-րով աշխարհքի հաւատացնել կուզէ որ թիւրքերը:

սին խօսում են մեր պատմագիրներ, մի կարծիք, որ հաւանական է, քանի որ այդ բերդից ոչ հե-ռու այժմ էլ գտնվում է Գարամանից անու-նով գիւղը: Անմիջապէս Նամուրդաբ քերդի տակ Դաւթոր դիւրը առաւել արագ հասանք է ստանում, դիւրվելով աւելի խոր ձորի մէջ, այնինչ, բերդին չը հասած, նրա ձորը ընդ-լայնանում է և նա կանգնել և թաւալ խոտով ծածկված մարդերով է անցնում:

Այդ տեղից ոչ հեռու գտնվում է Զաքեալան-քը: Թէ և նա հարուստ սեփականութիւններ ունի, հաշուելով մօտ 40 հազար դեկետարն անտառ *) Բայց ինչ են այդ ահապին կալուածների կեա-մատները: Ինչպէս երեւում է, դրանք մեծ չեն, վասն զի ինքն վանքը շատ խեղճ դրութեան մէջ է գտնվում: Բակը անմաքուր, ներքը բարձր թողի եղած, դռները պակասող ապակիների փոխանակ հին լրագրիներով կապրած: Ինչ համեմատութիւն որս և խաչակալող գիւղի մօտ գտնվող Թարգմա-նաց վանքի մէջ, որ հողեր, հարստութիւններ չու-նի, բայց մաքուր, կոկիկ է, որին ճանապարհոր-դը հասնում է յարմար ճանապարհներիով, որի մէջ նա գտնում է գեղեցիկ, մաքուր խուցեր, գտնում է և սիրալի ընդունելութիւն: Ինչու այդ տա-րերութիւնը—Զաքեալանքը մի վարդապետն է կա-ռավարում, այն ինչ Թարգմանաց վանքի մասին հոգում է մի աշխարհական, գանձակցի ու. Տէր-Ներսէստան, որի ընտանիքով սովորաբար վանքի մէջ ամառ է անցկացնում: Գուցէ վանքերը առա-ւել միջնորդարար դրութեան մէջ կը լինէին, եթէ

*) Դա և օ. թ. Այս գեղեցիկ անտառները վա-նքը կառավարող հայր սուրբը անհաշիւ կերպով կտրատում է, անուրաքնելու նպատակով, և հա-ւատացնում է, որ նա այդ անտառ է միայն վա-նքի իրաւունքները այս կալուածների վերա հա-տատուելու համար:

մէջ ամեն ինչ լաւ է: Այս օրերս ալ Մուշէն հե-ռագիր եկած է ստորագրեալ թիւերէն և հայերէ-որուն մէջ գոհութիւն կը յայտնուի երկրին վիճա-կէն: Այս միջոցները տղայական են, հեռանդ մը երբ կ'լլէ սուտ ըսէ թէ աղէկ եմ, անով աղէկ ե-ղած չըլլար և վիճակը աւելի կը գեղցնէ: Բայց քանի որ թիւերը կարեւորութիւն կուտան ասանկ միջոցներու ու գլուխ կարելի է ծածուկ միտքեր ունին, մենք ալ անոնց գործիք ըլլալու չենք: Երբ հոս հասաւ վանքի հեռագիրն, ամեն մարդ գիտէր թէ ինչ յարց տալու է այնպիսի հե-ռագրի մը, սակայն չէինք կարծել որ վա-նայ մէջ այսքան յուզմունք տրեւէր: Երբ վանքի-ներուն բողոքները հասան և Գրանէ հարցուցին պատրիարքապետի թէ ինչ տեսակ մարդիկ են ա-սոնք, պատրիարքապետն լաւ վկայութիւն տրուե-ցաւ, ինչպէս նաև եկեղեցականներու հեռագրի մասին: Բայց երկարեւր բողոքողները լաւ մար-դեր չեն, բայց աշխարհիս մէջ ոչ ոք տեսնուած է որ լաւ չը սեպուած մարդեր տուրքերին վճարեն և իրաւունք չունենան հանգիստ ապրելու: Հիմա և թէ Ներսէս սրբազան ելլէ այդ տեսակու ան-ձանց կողմը բռնէ, բնական է որ իր խօսքերը մեծ կշիռ կունենան: Սակայն մենք իրաւունք ու-նինք հաւատալու որ Ներսէս սրբազան այսպի-սի բան չէ բրած, գէթ կամաւ: Երբ մի անձի խեղ-քին, հայրենասիրական ուղւոյն, և անարատ բա-րոյականին վրա վստահութիւն ունինք, հաւատա-լու ենք որ այդ անձն ալ ինչ որ ընէ օգուտ աղ-բիւր կընէ և ունի իր պատճառները գոր չէ կարող քարոզել ի վերայ տանեաց:—Երբ Ներսէս սրբա-զան պատրիարք էր երբեմն ստիպուեցաւ տալ այնպիսի հրամաններ որք հակառակ էին աղբիւրի շահուց, սակայն կառավարութեան պահանջնե-րուն առաջ և ուրիշ նկատմաներով հարկ էր այդպիսի հրամաններ տալ, բայց Ներսէս սրբա-զան ձեռքի տակ այնպիսի միջոցներ կը գործա-դէր որով կոչնչացնէր պաշտօնական հրամաննե-րուն աղբիւրները: Ինչ կընէին իր հակառա-կորդները. գէնք կընէին իրենց այն յայտնի հա-մանները զոր Ներսէս սրբազան տուած էր, իսկ սրբազանը չէր կրնար յայտնապէս զրատարակել այդ հրամաններու համար տուած դեղձափնները: Ասանկ անձերու համար կատարեալ վստահու-թիւն ունենալու է, ուրիշ կերպով կառավարու-թիւն չէ կարելի:—Այժմ Նոյն պարագայն է: Դա-տեղը կապահովցնեն թէ Ներսէս սրբազան ուրիշ բան չէ ըրած բայց եթէ վկայել, երբ իրմէն զայն պահանջել են, որ այդ տեսակու անձինքն պա-տուաւոր անձինքն են: Եւ միթէ կարելի էր ուրիշ կերպ վկայութիւն տալ: Այն պահուն երբ այդ անձերէն ոմանք սուլթանէն նշաններ կընդունին,

նրանք կառավարվէին աշխարհականների ձեռքով, ինչպէս շատ անգամ լինում էր Ներսէս Մ-ի օրով որ աշխարհական հոգաբարձուներ էր նշանակում վանքերի վերա: Վանքերը և եկեղեցիները ոչ միայն իրեն կենդանի յիշատակ և վկայ հին ժա-մանակների մի մեծ նշանակութիւն ունեն ան-ցիակէ հետ ծանօթանալ ցանկացողներին համար: Նրանց մէջ են պահվել մեծ մասամբ արձանա-գրութիւններ և ձեռագիրք անտառաբաններ և սուրբ գրքեր, որոնք նշանաւոր են նրանց մէջ աւելադ-րած յիշատակարանների կողմից: Իմ գործս չէ խօսել այդ յիշատակարանների պատմական նշա-նակութեան վերա, քանի որ մի ուրիշ, պ. Բ. Գ. Ֆ. Ի. ինձանից աւելի կուշված է մեր տեսած և մասամբ արտադրած յիշատակարաններից այն օ-գուտը բաղել, որ նրանք կարող են տալ այդ տե-ղերի և դուցէ ընդհանրապէս մեր անցեալի ճա-նաչմանը: Եւ կուտեմ միայն, որ մի քանիսը այլ յիշատակարաններից մեզ նշանաւոր երեւցան և ու գլուխ մըսն քանի նման ուրիշ գրչագիրներ կան, որոնք մոռվ և խոր խուցերում թաղված են առանց ուշադրութեան, անյայտ մոռացութեան մէջ... Իսկ մենք որոնում ենք նոր նիւթեր մեր նախնիների կեանքը պատմապէս վերակենդան-լու նպատակով և աշխատում ենք կաթիլ առ կաթիլ հաւաքել ամեն մի վկայութիւն այդ մո-ռացված, գրեթէ արձանագրված անցեալի մասին...

Գանձակի տախարակը և Դաւթորի ձորը հա-րուտ են ոչ միայն պատմական այլ և նախա-կից հարաւ, Հէկէնէնդօրֆ գերմանական կոլոնիալ ճանապարհի վերա, տախարակի մէջ աչքին են ընկնում ցիր ու ցան բլուրներ, որոնց բնական չը լինելը ակնհայտ է: Գրանք Կլորդանները, այդին-քն բլրաձև գերեզմաններ են, որոնք դեռ հետազո-ված չեն, որովհետև մինչև այժմ, որքան էս ըսած եմ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգայնական թանգարանի գործունեությանը ցուցաբերող յայտնում է իր եղբայր ԵՅԱՅ ԳՐԻԳՈՐԻԱՆՈՒՆԻ մասին և խնդրում է ազգականներին և ծանոթներին շնորհ բերել հանգուցեալի յուզարկաւորութեան հանդիսին, այսօր, սեպտեմբերի 14-ին, ժամը 10-ին առաւօտեան, Կոնկիայում, Թանգարանի եկեղեցում, Բէալական ուսումնարանի դիմաց:

1—1

ՏՈՒՐԲԻՆՆԵՐ

Գերազանց կազմութեան, մեծ աջողութեամբ գործարկւում են ՌՈՒՍՍԱՍՏԱՆՈՒՄ առաջարկում է Ա. ԿՈՒՆԵՐՏ Լէբտաու, Գրեզդենում, Löbtau-Dresden. Որոշում են հիմնաւոր ազգայնական 2—3 (1)

ՈՐԲԵՐԻ ԳՅԱՐԱՆԸ յայտնում է, որ իր ներկայութեամբ ներկայ սեպտեմբերի 15-ին, առաւօտեան 10 ժամին, Թիֆլիսի Նահանգական գատարանի լոյսաւորութեամբ առաջարկում է ծախքի երկարական քարէ տուն բակով, որ պատկանում է վախճանական Յովսէփ Տէր-Ղազարովի որբերին և գտնւում է Հաւարարի պողոտայի 7-րդ բաժնում, Արխանգելսկի փողոցի վրա № 9 և 6: Ցանկացողները գնել այդ կայքը կարող են նրա ցուցակը տեսնել որբերի գատարանի գրասենեակի մէջ ամեն օր, բացի տոններից առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը: 2—3

ՄԻ ՖԻՐԱՆՍՈՒՀԻ, որ պարտք է թէ ՀԱՅ և թէ օտար ԲԱՐՁՐ զասակարգի ընտանիքներում քրանիական և գերմանական լեզուների դասերով և ունի գեղեցիկ վկայականներ, ցանկանում է իր ազատ ժամերին ունենալ դասեր: Հարցնել «Մշակ» խմբագրատանը: 5—5

ОТДАЕТСЯ одна чистая КОМНАТА съ мебелью, самоваромъ, прислугою и отоплениемъ. Мало-Орбеліановская улица, домъ Якова Дандурова № 9.

ՏՐԱՎՈՒՄ է վարձով մի մաքուր սենեակ, մեքենով, սամփաւոր, ծառայով և վառելիքով, Փոքր-Օրբէկեան փողոցի վրա, տուն Յակոբ Գանգուրովի № 9. 5—8

ՊԱՍՏԱՐ (օրց) ՏԱՐՆՈՊՈԼ եղբայրների գործարանական ՊԱՇԵՍԻ մէջ: Լորիս-Մելիքովսկայա փողոց, ա. Ջուրալովի, հոգեւոր սեմինարիայի հանդէպ: Ստացված է մեծ քանակութեամբ ՊԱՍՏԱՐ (օրց) 12 կոպէկից մինչև 5 րուբլի ՌՈՒՂՈ: Քանակութեամբ գնողներին ԶԻՋՈՒՄՆ կը լինի: 21—25

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒՆԻ ԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՍԻՄԵՐՆՈՎՍԿԻ ՓՈՂՈՑ, Տ. ՀԱՆՎԵՐԻՆՆԻ):

Հիւանդները ընդունվում են ամեն օր: Առաւօտեան՝ 9—10¹/₂ ժ. ՆԱՍԱՍՏԱՐԻՆԱՆ վերաբուժութեան և վնասական հ. և ՌՈՒԿԻՍԿԻ—կանանց, երեխայի և ներքին հ. 10¹/₂—12 ժ. ՇԱՀԱՋԵԱՆՆԵՐ—ներքին հ. 12—1 ժ. աչքացաւի ԼԱՐԻՆՈՎ—ամեն օր, բացի չորեքշաբթի և կիրակի: ԲՆՑԻ—չորեքշաբթի և կիրակի:

Երեկոյեան՝ 5—7 ժ. ՌԵՍԱԿՈՎ—երեխայի և կոկորդի հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Ջոպլին և հոգեկան հ. և էլեկտրա-բուժութեան ՅԱՐՈՒԹԻՆՆԱՆՆԵՐ—ամեն օր և, իւր խորհրդակից նոյն հիւանդութեանց համար, Ա. ԲԱՐԵԱՆ—երեքշաբթի և շաբաթ: Ընդհանուր բժշկական խորհուրդ (կոնսուլտացիա)—երեքշաբթի և շաբաթ 7—8 ժամը երեկոյեան: Գիշերօթիկ հիւանդները՝ վարձ խորհուրդ երեքշաբթի—50 կոպ. կ'օնսուլտացիան—3 րուբ. չքաւորները—անվարձ:

Հիւանդանոցի կառավարիչ ՆԱՍԱՍՏԱՐԻՆՆԵՐ (ընտրվում է նոյն հիւանդանոցում):

Հիւանդանոցի բոլորովին անկախ պատճառներով, բժշկ. Տիւնաֆուր չէ կարողանում բաժնաւորութեան բաժին: (չոր, ուրբ.)

Желают КУПИТЬ одинъ экземпляръ «БОРНИКА МАТЕРІАЛОВЪ ДЛЯ ОПИСАНІЯ МѢСТНОСТЕЙ И ПЛЕМЕНЪ НАВКА-ЗА» Выпускъ первый. Просятъ доставить въ контору редакціи газеты «МШАКЪ».

4—5

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ ցանկանում է ԴԱՍԵՐ ունենալ ԳԻՄՆԱՋԻԱԿԱՆ դասընթացքի ԲՈՂՈՐ առարկաներից կամ ԿՕՐԵԿՏՈՐԻԱԿԱՆ աշխատանք ուսաց լեզուի: Հասցեն, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ: 3—10

500 ՄԱՀԱԿԱԼՆԵՐ ՄԱՀԱԿԱԼՆԵՐ գնելուց առաջ խելացի և ձեռնտու է տեսնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մահճակալների ընտրութիւնը և քանակութիւնը: Արժուճումը գալերէյ № № 156, 157, 158, 159 և 160: ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՆԵԼ այս համարների վրա: 8—10

Հաւարարի «ՀՈՒՓՍԻՄԵԱՆ» Օրիորդաց ռուսամեարանի հոգաբարձութիւնը յայտնում է յարգելի հասարակութեանը, որ աշակերտութեան ընդունելութիւնը սկսվեց սեպտեմբերի 1-ից, իսկ կանոնաւոր ուսումը 10-ից: Ընդունելութիւնը կը լինի ամեն օր, առաւօտեան 9 ժամից, մինչև 12: Ուսումնարանը ունի երեք պատրաստական և բացվում է առաջին դասատուին:

Հոգաբարձու Ա. ՄԷԼԻՔ-ԱՂԻՎԱՆԵՅ 6—6

Մ. Ն. ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՇԵՍ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵՆԱՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՈԼԻԶԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 րուբլուց գիւմեր, բազկաթոռներ 6 ր., գիւմներ 12—25 ր., կաշեկի, մանկական աթոռներ և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀԱԿԱԼՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պահարաններ, ծախքի սամփաւոր: Չեմպաններ 2 ր. 75 կ.—26 ր., սակիթաժ ձեռքի և ուսից կաշեկու, ճանապարհի սամփաւոր, ձԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿԵԼ 5 ր. 50 կ.—30 ր.:

Սամփաւոր, խոհանոցի պիւնձէ ամաններ, կօֆէյնիկ, թէյամաններ, ութոներ և աղալու գործիք, գերմանական հմարով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒԱՆԱԼՈՒ ՄԱՐՄԱՐԻՆՆԻ ամաններ 40 ր., երես լուսնապու պիւնձէ և ժետի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., տուպիտի հայելիներ 2 ր. 40 կ.—13 ր., զանազան մետաղների մամակներ 1 ր.—15 ր., սեղանի գդալներ 4 ր. 50 կ. և թանգ, թէյի գդալներ Ֆրաժէի, մէլիթի, լիհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, զանազան, պատառաքաղեր 2 ր.—26 ր.:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ուստական և անդլական պողպատէ և երկաթէ զանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կոպէկներ 10 կ. և աւելի:

ԲԵՎՈՂԱՆԵՐ զանազան տեսակի 3 ր. 50 կ.—35 ր., պատրոններ լէզովերների համար, հրացան 6 ր. և աւելի, զանազան վեշալիսներ, կշիռներ: Անգլիական և ամերիկական կշիռներ 50 կ.—2 ր. արշիներ:

Մշտապես ունեւ 10,000 Ֆ. Թ. Պօպով եղբայրների, կաֆէ ՄԻՆԵԼՍՈՆԻ, թէյի համար խմորեղէն էյնեմի, ԲԵՏԵՎԱՐԻ սիգարաներ, հոտաւէտ ջուր (Օղբկօյն) ծխող փռէք, պուգրա, գլիցերինի սապօն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ զայնաթէյի զանազան ԱՊԱՆԻՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քսակներ, սանդուղներ, շապիկներ, լայիկ ձեռնոցներ կանանց, զինուորական զամբի ձեռնոցներ, գարուս, թէյեր, բրնձիկ և մարմարեղէն թանաքամաններ, մոխրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչակիթեր, սուրճուշ, փօստի թուղթ, ծրարներ և այլն:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարնջի, գինու և դեղատան աղբանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ:

Վերե յիշված բոլոր առարկաները ունեւ մեծ քանակութեամբ և ստանում եւ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Առևտրականներին զիջում են առանձին պայմաններ:


Օտարաբաղադրացիք կարող են դիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЬ-НИКОГОСОВУ.

44—100

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադարձնող: Գինը 2 ր. շիշը՝ ՓՈՍՏԱՅՈՂ ուղարկված 2 ր. 49 կոպ. ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԽԻՂ, մազերը ամրացնող համար, 1 ր. ամանը և վրձին գլխացաւի գէմ, ՏՈՒԱԼԷՏ Ի ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 46—100



ԱՆԴՐԿՈՎ ԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ձԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԹԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Բաթում . .	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.	Բաթում . .	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Սամորեղի .	12—2	8—18 առ.	Գանձակ . .	12—20	10—23 առ.
Բիծն . . .	1—9	1—22	Թիֆլիս . .	7—49	12—48 գիշ.
Սուրամ . .	6—8	6—11 երեկ.	Գորի . . .	10—56	8—31 առ.
Միխայլով .	6—23	6—33	Միխայլով .	12—26	11—
Գորի . . .	7—53	8—2	Սուրամ . .	12—58	1—1
Թիֆլիս . .	10—25	11—11	Բիծն . . .	5—54	6—9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամորեղի .	7—	7—20
Բաթում . .	8—8 երեկ.	—	Բաթում . .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ Լ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Սուրամ . .	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.	Թիֆլիս . .	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Միխայլով .	—	1—38 գիշեր	—	—	3—11
Գորի . . .	1—50	2—5	Գորի . . .	6—30 երեկ.	6—41
Թիֆլիս . .	4—6	4—30	Միխայլով .	8—41	8—56
Թիֆլիս . .	8—առաւ.	—	Սուրամ . .	9—8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԻԻ Լ ՓՈԹԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Փոթի . . .	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.	Սամորեղի .	ժամ. րոպէ.	ժամ. րոպէ.
Սամորեղի .	—	8—45 առ.	—	—	7—30 երեկ.
—	11—39 առ.	—	Փոթի . . .	10—24 երեկ.	—